ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

92-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 59 (24612), հատավաճառ՝ 20000 ռիալ

سال نودودوم - شماره (۲۴۶۱۲) ۵۹ - تکشماره ۲۰۰۰۰ ریال - ۸ صفحه

ՇԱԲԱԹ

16 ՄԱՐՏԻ 2024

آلیک

شنبه – ۲۶ اسفند ۱۴۰۲

روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی

E-mail: info@alikonline.ir www.alikonline.ir

ՆԵՄԵՍԻՍ ԱՍՏԻԱՑՈՒՀՈՒ ՀԱՅ ՔՐՄԱՊԵՏԸ ՅԱՒԵՐԺԱՑԱՒ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Մարսէլում բացուել է Սողոմոն Թեհլիրեանի յուշարձանը

(Տես 8-րդ էջում)

Յիշատակի միջոցառում՝ նուիրուած «Նեմեսիս» գործողութեան 103-ամեակին

(Տես 8-րդ էջում)

Նասեր Քանանի.

«Մարդու իրաւունքների քաղաքական եւ գործիքային օգտագործումը ԱՄՆ-ի արտաքին քաղաքականութեան իրականութեան մի մասն է»

«ԱԼԻՔ» - Իրանի արտաքին գործերի նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Նասեր Քանանին յայտարարել է. «Մարդու իրաւունքների քաղաքական եւ գործիքային օգտագործումը ԱՄՆ-ի արտաքին քաղաքականութեան իրականութեան մի մասն է»:

«Թասնիմ» լրատուական գործակալութեան հասցէն՝ Նասեր Քանանին ընդգծել է, որ ամերիկացի պաշտօնատարները, ակտիւացնելով Իրանում մարդու իրաւունքների մասին իրենց քարոզչամեքենան, չեն յաջողելու սրբագրել ԱՄՆ-ի գործակցութիւնն ու բռնաճնշումը՝ Գազայում եւ Յորդանան գետի արեւմտեան հատուածում, Պաղեստինի իրաւազրկուած ժողովրդի ցեղասպանութեան ու զանգուածային սպանութիւնների առումով:

Քանանին յստակեցրել է, որ ԱՄՆ-ը, մարդկային խղճի եւ աշխարհի հասարակական կարծիքի մօտ, գլխաւոր ամբաստանեալն է՝ մարդու իրաւունքները եւ մարդասիրական օրէնքները խախտելու առումով, քանի որ մասնակից է սիոնիստական ռեժիմին զինելու հարցով: Նա նշել է, որ այդ երկրի ցուցադրական ու կեղծաւոր քայլերը, այն առումով, որ չի խնայում իր ջանքը պաղեստինցիների համար սննդամթերք ու դեղորայք մատակարարելու խնդրով, չի սրբագրում այն հանգամանքը, որ ԱՄՆ-ը կատարելապէս հովանաւորում է սիոնիստական ռեժիմի ռազմական յանցագործութիւնները:

Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութիւնում Իրանի անունը գրանցուել է «Ընտանեկան առողջութիւն» նախագծում

«ԱԼԻՔ» - Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութիւնում Իրանի անունը գրանցուել է «Ընտանեկան առողջութիւն» նախագծում:

Ղազախստանի մայրաքաղաք՝ Աստանայում Շանհայի համագործակցութեան կազմակերպութեան անդամ երկրների առողջապահութեան նախարարների 7-րդ հանդիպմանը, ԻԻՀ

(Շար. 8-րդ էջում)

Թեհրանի «Վահդաթ» օպերային դահլիճում տեղի ունեցաւ

Իրանահայ դիրիժոր Սերժիկ Միրզայեանի ղեկավարութեամբ՝ համերգ՝ նուիրուած 1915 թւականի Հայոց Ցեղասպանութեան յիշատակին



«ԱԼԻՔ» - Չորեքշաբթի, մարտի 13-ին, երկու ժամ տեւողութեամբ երաժշտագէտ Սերժիկ Միրզայեանի դիրիժորութեամբ Թեհրանի «Վահդաթ» օպերային դահլիճում տեղի է ունեցել դասական երաժշտութեան գլուխգործոցներով յագեցած՝ փողային, լարային, հարուածային գործիքների եւ քորալ կատարումներով համերգ:

ԻՄՆԱ-ի համաձայն՝ համերգը նուիրուած է եղել 1915 թւականին Օսմանեան

(Շար. 8-րդ էջում)

Բաքուն հիմա էլ փորձում է Նոռուզը սեփականացնել

Ալիեւական մամուլի վերջին յայտնագործութիւնը.

«Նոռուզը պէտք է անուանել իր պատմական անունով՝ «Ենգի Գոն»»



(Տես 8-րդ էջում)

«Դաշնակցական դպրոցի գաղափարական ուժեղ մթնոլորտը փորձաքար է եղած միշտ: Անհատապաշտները, մեր հաւաքական իտէալները ընկալելու եւ անոնց իրականացման ամբողջութեամբ նուիրուելու անատակ տարրերը ինքնաբերաբար թափած են. մնացած են միւսները, ու կերտած՝ պատմութիւն եւ տիպար»

Հրաչ Տասնապետեան (1928 - 2001)

Դաշնակցական անուանի գործիչ, ՀՅԴ Բիւրոյի երկար տարիների անդամ.

Մարտի 16-ը նրա յիշատակի օրն է

ARAM®
coffee
ԱՐԱՄ
قهوه آرام
սուրճ
فروشگاه مرکزی:
قائم مقام فراهانی–شماره ۶۴
88303478 եւ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram__coffee

Վարուժան Գեղամեան.

«Սերդար Քըլըչի պատուիրակութիւնը ՀՀ-ին առաջարկել է Սիւնիքի մարզին տալ յատուկ կարգավիճակ՝ Կալինինգրադի նմանութեամբ»

Türkiye
CAN UZUN Türkiye dedi
DOLANDIRICILARDAN RAMAZAN TUZAGI
ERDOĞAN O OTELDE
FRANSA VE IRAN SABOTAJ PEŞİNDE
ZENGEZUR'A 10 BİN ÇETECİ
IRAK'TAKİ TERÖR BU YAZ ÇÖZÜLECEK
YENİ SAVAŞ KAÇINILMAZ

Թուրքագէտ Վարուժան Գեղամեանը գրում է.

«Թուրքիայի մերձիշխանական «Türkiye Gazetesi» օրաթերթը հետաքրքիր մանրամասներ է հրապարակել Անթալիայի դիւանագիտական ֆորումի ժամանակ տեղի ունեցած հայ-թուրքական բանակցութիւններից:

Ըստ թերթի աղբիւրների՝ Սերդար Քըլըչի գլխաւորած թուրքական պատուիրակութիւնը ՀՀ ներկայացուցիչներին առաջարկել է Սիւնիքի մարզին (Զանգեզուրին) տալ յատուկ կարգավիճակ այնպիսի մոդելով, ինչպիսին որ ունի «Ռուսաստանին կապւած, բայց միաժամանակ ինքնավար մարզի կարգավիճակով հանդէս եկող Կալինինգրադը»: Այն, որ Թուրքիա-Ադրբեջան գոյգի հիմնական թիրախն այժմ Սիւնիքն է, կասկածից վեր է, սակայն այս մանրամասները մեզ շատ համար կարեւոր են՝ հասկանալու թշնամու ներկայիս մարտավարութիւնը (այս մասին տե՛ս այս յօդւածում): Այս լուրի համատեքստում հասկանալի է դառնում «Արեւմտեան Զանգեզուրի» մասին թուրք-ադրբեջանական քարոզչութիւնը. առաջիկայում հաւանական է, որ ադրբեջանցիների բնակեցումը ապահովելուց յետոյ Սիւնիքը պոկելու համար առաջարկւի Սիւնիքի յատուկ կարգավիճակ՝ Թուրքիայի վերահսկողութեան ներքոյ: Սա նման է Նախիջեւանի ճակատագրին:

Եւ եթէ թերթի տեղեկութիւնները ճիշտ են, ապա մենք այժմ գիտենք, թէ ինչ են բանակցում Էրդողանի հետ Հայաստանի դէ-ֆակտո ներկայացուցիչները իրենց «մշտական կապի» ժամանակ»:

168.am

Հրանտ Մելիք-Շահնազարեան.

«Նիկոլն արդէն յանձնել է ադրբեջանցիների պահանջած՝ այսպէս կոչւած անկլաւները»

«Ոսկանապատ» վերլուծական կենտրոնի հիմնադիր, քաղաքագէտ Հրանտ Մելիք-Շահնազարեանը, արձագանգելով Նիկոլ Փաշինեանի երէկւայ ասուլիսում հնչեցրած յայտարարութիւններին, «Ֆէյսբուք»-եան իր էջում գրել է.

«2021 թ. յունւարի 2-ին ադրբեջանցիները մտել են Սիւնիքի մարզի Շուռնուխ գիւղ եւ պահանջել, որ տեղի բնակիչները դուրս գան իրենց տներից: Շուռնուխցիների համար անսպասելի է եղել թշնամու յայտնւելը: Մարդիկ իրենց առօրեայ հոգսերով էին զբաղւած, մտքներով էլ չէր անցնում, որ յաջորդ պահին կարող են անտուն եւ անհայրենիք մնալ:

Գիւղացիներին ոչ ոք չէր ասել, որ իրենց տները «ՀՀ տարածքում չեն», որ ինչ-ինչ քարտէզներում «Շուռնուխն Ադրբեջանի կազմում է» եւ ընդհանրապէս, որ «գիւղի անունն էլ ոչ թէ Շուռնուխ, այլ Էյւազլի է»: Հայաստանում դրա մասին ոչ ոք չգիտէր՝ բացառութեամբ դաւաճան իշխանութիւնների, որոնք փաստացի հայրենիքի այդ հատւածը՝ բնակիչներով հանդերձ, յանձնեցին թշնամուն: Լաւ է՝ մարդիկ գոնէ կարողացան դուրս գալ բնակավայրի՝ թշնամուն փոխանցւած հատւածից:

Վաղը նոյնը լինելու է նաեւ Տաւուշի մարզում: Նիկոլն արդէն յանձնել է ադրբեջանցիների պահանջած՝ այսպէս կոչւած անկլաւները: Նա ուղիղ եթերում է արել դա այսօր՝ յայտարարելով, թէ ՀՀ տարածքում նման բնակավայրեր չկան: Չեմ զարմանայ, եթէ պարզւի, որ զինւած ուժերն էլ են արդէն հեռացւած սահմանից: Հետեւաբար վտանգի տակ է ոչ միայն մեր Հայրենիքի այդ հատւածը, այլեւ այնտեղ բնակւող մեր բազում հայրենակիցները: Իսկ եթէ զօրքն այնուամենայնիւ դեռ կանգնած է սահմանում, ուրեմն վտանգւած են նաեւ զինւորականները: Որովհետեւ առաջ գալով՝ թշնամին յուլու է հէնց Նիկոլի խօսքերին՝ ասելով, թէ ի՞նչ գործ ունեն հայ զինւորներն Ադրբեջանի տարածքում: Չէ՞ որ Նիկոլն արդէն յայտարարել է, որ այդ գիւղերը ՀՀ տարածքում չեն»:

Տիգրան Աբրահամեան.

«Այսօր էլ Զինւած ուժերի ռազմական պոտենցիալի հիմնական մասը ձեւաւորւել է մինչեւ 2018 թւականը»

Տիգրան Աբրահամեանը «Ֆէյսբուք»-եան իր էջում գրել է.

«Ալիեւն իր ելոյթում նախօրէին կրկին յիշել էր 2020 թւականի 44-օրեայ պատերազմն ու Արցախի նկատմամբ իրականացրած վերջին ագրեսիան, որի հիմքում այս անգամ Հայաստանի ու Արցախի մեծածաւալ սպառազինութեան եւ զինտեխնիկայի թեման էր:

Ալիեւը հարց էր յղում՝ որտեղի՞ց հայկական կողմին 6 մլրդ. դոլարի սպառազինութիւն, ռազմական տեխնիկա ու պատասխանում, որ դա այլ երկրներ են նւիրաբերել:

Իհարկէ Ալիեւն անդրադարձաւ բացառապէս այն տեխնիկային, որը 2020-23 թւականների ընթացքում կա՛մ խոցել են, կա՛մ պատերազմական գործողութիւնների հետեւանքով անցել ադրբեջանցիների վերահսկողութեան տակ:

Թէ ինչքան զէնք-զինամթերք կամ սպառազինութիւն ունի ՀՀ ՊՆ-ն ամբողջութեամբ մէջ, բնականաբար դրա թւերը չունեն կամ չհնչեցուցին:

Հայաստանը մինչեւ 2018-ը, տարբեր պայմանագրերի եւ պայմանաւորւածութիւնների շրջանակներում ստացել է մեծածաւալ ռազմական աջակցութիւն՝ գերակշիռ մասը ՌԴ-ից, սակայն զուգահեռ, անգամներով մեծ, խոշոր ռազմական գնումներ արել:

Նախագահ Սերժ Սարգսեանն այս թեմայով մի քանի անգամ հպանցիկ ակնարկել է՝ առանց մասնաւորեցնելու, թէ ե՞րբ, ո՞ւմ հետ եւ ի՞նչ պայմաններում է մեծ ծաւալի ռազմական մատակարարումներ իրականացել:

Ի դէպ, այսօր էլ Զինւած ուժերի ռազմական պոտենցիալի հիմնական մասը ձեւաւորւել է մինչեւ 2018 թւականը, այլ բան է, որ դրա մասին Հայաստանի նախկին նախագահները, պաշտպանութեան նախարարները ընդհանուր գծերով են խօսել, որովհետեւ այն իր մէջ պետական եւ ռազմական բնոյթի գաղտնի տեղեկութիւններ էր պարունակել:

ՀՀ գործող իշխանութիւնը մսխել է այդ պոտենցիալի մի էական հատւած, այդ թւում՝ թշնամուն յանձնելու միջոցով, սակայն այսօր էլ այդ մնացած ռեսուրսներն են, որ Զինւած ուժերին հնարաւորութիւն են տալիս մարտական հերթապահութիւն իրականացնել, տարբեր ուղղութիւններում, ըստ իրաւունքի, մարտական առաջադրանքներ լուծել»:

168.am

Քրիստինէ Վարդանեան.

«Դաշնակցութիւնը տարբերակում է եւ շատ լաւ գիտի՝ ինչպէս պայքարել երկրի ներսում եւ երկրից դուրս: Սա շատ կարեւոր հանգամանք է»

«Հրապարակ» թերթը գրում է. «Իշխանութիւնը պատկանում է ժողովրդին» դրոյթն արեւմտեան քաղաքակրթութեան անկիւնաքարային սկզբունքներից է: Այդ քաղաքակրթութեան ձեւաւորման ակունքներում կանգնած է եղել նաեւ հայ ազգը:

Ըստ այդմ, երբ անհատի կամ մի խումբ անձանց կողմից իշխանութիւնը իրացւում է, թէկուզեւ կեղծ ժողովրդավարութեան շրջանակներքոյ, աւելին՝ կառավարիչների կողմից սպասարկւում է օտարի շահը, ապստամբութիւնը դառնում է մարդկանց բնական իրաւունքը: Այդ իրաւունքն անուղղակի կերպով ամրագրւած է նաեւ բազմաթիւ պետութիւնների սահմանադրութիւններում, այդ թւում՝ նաեւ ՀՀ սահմանադրութեան մէջ՝ ի դէմս իշխանութիւնը ժողովրդին պատկանելու վերաբերեալ վերոյիշեալ դրոյթի: Ուսումնասիրելով՝ համաշխարհային պատմութիւնը՝ մենք տեսնում ենք, որ անգամ աշխարհի ամենաքաղաքակիրթ երկրներում, երբ այլ ելք չի մնում, ժողովուրդները դիմում են ապստամբութեան հեռացնելով իշխանութիւններին: Եւ քաղաքական պայքարի մէջ կիրառւում են նաեւ զինւած պայքարի, բռնութեան տարրեր: Շատ հեռու չգնանք. 2008-ի մարտի 1-ին պայքարողները, նաեւ՝ Նիկոլ Փաշինեանի գլխաւորութեամբ, մեքենաներ էին այրում, խանութներ թալանում եւ այլն:

Նախօրէին ձերբակալւեց, ապա կալանաւորւեց դաշնակցական Գագիկ Սարգսեանը, մեղադրանք առաջադրւեց նրան եւ մի խումբ անձանց, ում կասկածում են ՔՊ-ականների դէմ «ահաբեկչութեան փորձ» կատարելու մէջ: Նրանք փոքր հզօրութեան պայթուցիկներ էին դրել Գուրգէն Արսէնեանի, Գուրգէն Մելքոնեանի եւ Արաբկիրի ՔՊ գրասենեակի մօտ: Թէեւ, փաստաբանի փոխանցմամբ, այս անձինք չեն ընդունել մեղքը: «Հրապարակ»-ը գրուցել է ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր, դաշնակցական Քրիստինէ Վարդանեանի հետ:

- Գագիկ Սարգսեանին մեղադրում են իշխանութիւնների դէմ ահաբեկչութեան փորձ կատարելու մէջ, չնայած շատերն այդ պայթուցիկների տեղադրումն ընկալեցին զուտ որպէս իշխանութեանն ուղղւած զգուշացում, որ հայ ժողովուրդն է երկրի տէրը եւ թոյլ չի տալու իր երկրի հետ վարւել այնպէս, ինչպէս սեփական բոստանիդ հետ կը վարւէիր….

- Գագիկ Սարգսեանը չի ընդունել մեղադրանքը, փաստաբանն արդէն յայտարարութեամբ է հանդէս եկել: Պէտք է սպասենք իրաւական ընթացքին, այլ բան այդ մասով չեմ կարող ասել, զերծ կը մնամ նրան վնասելուց: Գոյութիւն ունեն պարզ փաստեր: Մենք ապրում ենք մի երկրում, որտեղ ահասարսուռ տեսանիւթեր են պատրաստւում, յայտարարութիւններ են արւում, մարդիկ մեղադրւում են պետական դաւաճանութեան մէջ եւ յետոյ՝ ամիսներ անց, արդարացւում են: Այս իշխանութիւնը գործում է շռուների տրամաբանութեամբ: Ամէն անգամ, երբ մեր անվտանգութեան հարցերը սրւում են, այս իշխանութիւնները նոր շռուներ են բեմադրում: Այսօր Տաւուշից գիւղեր յանձնելու մասին խօսում: Մեր օրակարգը սա է, ինչո՞ւ են այդ ամենին զուգահեռ այլ օրակարգեր մտցնում մեր կեանք, կարծում եմ՝ պարզ է:

- Իշխանութիւնները, այո, այս անգամ էլ Տաւուշի գիւղերն են նւիրում Ադրբեջանին: Ինչպէս պայքարել նման իշխանութեան դէմ, որը ոչ մի կերպ չի հեռանում եւ շարունակում է կործանել երկիրը:

- Համաշխարհային պատմութեան օրինակները ցոյց են տալիս, որ անգամ ամենաաթոռապաշտ բռնապետներին հնարաւոր է լինում փոխել, հեռացնել համաժողովրդական մոբիլիզացիայի միջոցով: Մենք բազմիցս ասել ենք, որ ճանապարհը դա է, ու հէնց այդ ճանապարհով էլ շարժւելու ենք: Բեկում կարող է մտցնել միայն իշխանափոխութիւնը:

- Փողոցային պայքարը նկատի ունէք: Ինչ էք նախատեսել այդ առումով:

- Մարդկանց մոբիլիզացիան տեղի է ունենում փողոցում, հրապարակներում: Կարող են տարբեր դրսեւորումներ ու առիթներ լինել, այս իշխանութիւններն էլ հէնց այդ ճանապարհով են իշխանութեան եկել, հետեւաբար՝ հէնց դրանից էլ վախենում են: Մեր այսօրւայ գործառոյթը մենք տեսնում ենք այդ ճանապարհով: Վտանգների դէմ պէտք է պայքարենք հանրային մոբիլիզացիայի միջոցով:

- Բայց բազում նման փորձեր եղել են, արդիւնք չկայ: ՀՅԴ-ն յեղափոխական կուսակցութիւն է, ապստամբող, բայց հիմա ոչինչ չի ձեռնարկում, առհասարակ՝ քաղաքական դաշտը պասիւ է: Ինչ էք կարծում՝ հայ ժողովուրդն այսօր չունի՞ ապստամբելու իրաւունք:

- ՀՅԴ-ն, այո, յեղափոխական կուսակցութիւն է եւ ստեղծւել է իր ժողովրդի իրաւունքների պաշտպանութեան համար: Կարող են տարբեր գործիքակազմերով լինել դրանք: Երբ իշխանութիւնը վերածւում է անօրինականութեան, ընդվզումը դառնում է պարտականութիւն: Այնուամենայնիւ, Դաշնակցութիւնը երբեք երկրի ներսում քաղաքական հարցեր լուծելու համար չի դիմել այն մեթոդներին, որոնց դիմել է արտաքին թշնամիների հետ պայքարելիս: Մեզ համար այդ գիծը շատ յստակ է եւ խօսում է մեր պետականամէտութեան մասին: Դաշնակցութիւնը տարբերակում է եւ շատ լաւ գիտի՝ ինչպէս պայքարել երկրի ներսում եւ երկրից դուրս: Սա շատ կարեւոր հանգամանք է: Ինչ վերաբերում է ընդվզմանը, ապա դա հայ մարդու իրաւունքն է՝ սահմանադրական իրաւունքը:

Արմէն Աշոտեան.

«Անհերքելի է, որ 2018 թ. եւ 2021 թ. Փաշինեանը վարչապետ դարձաւ գէոպոլիտիկ կոնսենսուսի շնորհիւ, այդ թւում՝ Ռուսաստանի համաձայնութեամբ»

ՀՀԿ փոխնախագահ, քաղաքական տարկեալ Արմէն Աշոտեանն ամենշաբաթեայ հարցուպատասխանի ֆորմատով շարունակում է պատասխանել քաղաքացիներին յուզող հարցերին:

Հարց 5 – Նարինէ Սահակեան

Նորից բացայայտ ատելութեան խօսք է սկսուել ՌԴ-ի դէմ. ինչի՞ կը բերի այս քաղաքականութիւնը, մենք մինչեւ ե՞րբ ենք ունենալու մահեր եւ կորուստներ:

Արմէն Աշոտեան - *Պէտք է յստակ արձանագրել, որ երբ քննադատում ենք քաղաքականութիւնը, որ վարում է Նիկոլը, դա անում ենք բացառապէս հայկական շահերից ելնելով, եւ ոչ թէ ներկայացնելով Կրեմլի շահերը:*

Անգամ եւրոպացիներն են բարձրաձայնում, որ Ռուսաստանի փոխարէն՝ Հարաւային Կովկասում նախընտրում են Թուրքիային: Այո՛, ռուսներն իդէալական դաշնակիցներ չեն (եթէ այդպիսիք առհասարակ լինում են), ռուսական քաղաքականութիւնը Հարաւային Կովկասում, մեղմ ասած, անհասկանալի էր դեռեւս 2018 թ.-ի թաւշեայ իշխանազաւթումից սկսած:

Որքան էլ ոմանց հիմա դուր չի գալիս այս դառը ճշմարտութիւնը, բայց անհերքելի է, որ 2018 թ.-ին եւ 2021 թ.-ին Փաշինեանը վարչապետ դարձաւ գէոպոլիտիկ կոնսենսուսի շնորհիւ, այդ թւում՝ Ռուսաստանի համաձայնութեամբ: Պարզ էր, որ նա ինչ-որ մէկին զցելու է իր գէոպոլիտիկ խաղերի մէջ, եւ այլեւս անթաքոյց է, որ նա ընտրել է արեւմտեան բեւեռը:

Յիշեցնեմ, թէ ինչպէս էր Փաշինեանը 2018 թ.-ի միտինգներին ինքնամոռաց յիշատակում եւ հրճւում Մարիա Զախարովայի մեկնաբանութիւններով, ինչպէս խախտելով ՀՀ Սահմանադրութիւնը՝ Միրիա ուղարկւեց հայկական զօրախումբ, ինչպէս էր ռուսական կենտրոնական մեդիաներով Զելենսկիին խորհուրդներ տալիս Պուտինի հետ աշխատելու հարցով, եւ այլն:

Զաւեշտ է, երբ իրենց հակառուսականութիւնը Փաշինեանը եւ իր թիմը հիմա հրամցնում են մեզ՝ որպէս «սուվերենութեան, անկախութեան համար պայքար»: Ադրբէջանը եւ Թուրքիան կանոնաւոր կերպով ոտնահարում են մեր ինքնիշխանութիւնը, սակայն Նիկոլը յամառօրէն լուռ է այս ուղղութեամբ, աւելին, նաեւ համաձայնում է Ադրբէջանի եւ Թուրքիայի պահանջներին, օրէնքով ՀՀ Սահմանադրութիւնը փոխելու հարցով:

Եւ այս ֆոնի վրայ ինքնիշխանութեան համար պայքարում թիրախ դարձնել Ռուսաստանը, իրականութեանը չհամապատասխանող բլեֆ է: Այո՛, մենք կախուած ենք Ռուսաստանից ճիշտ այնպէս, ինչպէս Կանադան՝ ԱՄՆ-ից, Մոնղոլիան՝ Չինաստանից, Խրւաթիան՝ Գերմանիայից, էլ չասեմ բազմաթիւ երկրների յետկոլոնիալ կախուածութիւնների մասին:

Հայաստանը չունի որեւէ ռեսուրս՝ ներգրաււելու գէոպոլիտիկ պատերազմի մէջ ՌԴ-ի եւ Արեւմուտքի միջեւ՝ ո՛չ մարդկային, ո՛չ տարածքային, ո՛չ բնական պաշարների: Աւելին, Հայաստանը չունի նաեւ ոչ մի շահ՝ դառնալու գէոպոլիտիկ նորակոչիկ: Դա մեր պատերազմը չէ:

Յարգանքով՝
Արմէն Աշոտեան
ՀՀԿ փոխնախագահ
«Նուբարաշէն» ՔԿՀ
09.03.24 թւական
168.am

Ժամանակի եւ իրականութեան կորստով՝ մոլորուած, քանդուած հասարակութիւն

ՎԱՀԷ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
«Այլընտրանքային նախագծեր» խմբի համահիմնադիր

Հ. Բագրատեանի՝ Press Կենտրոն հաղորդման ժամանակ Շաքէ Իսայեանի հետ զրոյցից ցաւոտ մէջբերում անեմ.

«Մարդ չկայ էս երկրում, ինձ թւում է՝ էս երկիրը մտաւորական չունի արդէն, տնտեսագէտ չունի, դոկտորներ չկան, ոչ ոք չի խօսում, էս երկիրը մեռած ա արդէն, էս երկիրը կարծիք չունի»:

Անլեզու երկիր ենք դարձել, մի խօսքով: Սա նման է պատմական էքսպերիմենտի:

Պարզ չէ՞, որ նման երկրի գլխին իշխանութիւնը ինչ ուզի կանի, պարզ չէ՞, որ նման երկրից թշնամին ինչ ուզի՝ կը տանի:

Անմռունչ հասարակութիւն, որի հետ մի քանի կիսագրագէտով ինչ ուզում՝ անում են: Մարդիկ վախենում են իրենց ամենափոքր շահերը պաշտպանելուց: Առաւելագոյնը մի ֆրազ են կրկնում՝ մի քաղաքականացրէք, ու մի թեթեւ կմկմում իրենց պրոբլեմից:

Ով ինչ փորձանք ուզում՝ բերում է: Դեղ առնելու հնարաւորութիւն չեն տալիս. հա՛մ բժիշկն է վախենում դրա դէմ բողոքելուց, համ՝ հիւանդը: Ամէն ոլորտում ընդամէնը մի քանի հոգի են, որ խօսում են: Բոլոր փողոցները այլանդակ փոսեր են, մեքենաները ջարդւում են՝ նորմալ է:

Ակնյայտ արկածախնդրութեամբ՝ իշխանութիւնը մեզ բոլորիս տանում է ադէտի. հասարակութիւնը ձայն չի հանում՝ «մենք քաղաքականութեամբ չենք զբաղւում»: Վաղը, որ Երեւանը ռմբակոծեն, էլի ասելու են՝ մի քաղաքականացրէք, սա քաղաքական հարց չի, զուտ ռմբակոծութեան հարց է:

Սա հասարակութիւն չէ, սա մի մեծ համակենտրոնացման ճամբար է, որն ինքներս ենք սարքել:

Ադրբէջանը մեր հայրենիքից 4 գիւղ է պահանջում՝ ռէակցիա չկայ, ոնց որ մի կգ. խնձոր տանի: Երկիրը մտցնում են Ռուսաստանի հետ սուր առճակատման մէջ. ձայն չկայ, ոնց որ իրենք չեն զգալու ողջ հետեւանքները: Այնպիսի վիճակում ենք հիմա, որ մի քանի հոգու մտքով կարող է անցնել՝ արշաւ սկսել Հայ Առաքելական Եկեղեցու դէմ՝ առանց հաշի առնելու պատմական ու հասարակական իրողութիւնները, առանց հաշի առնելու եկեղեցու հետեւորդների ահռելի բանակը: Ինչո՞ւ չենք հասկացնում, որ մենք մէկ միլիոն մարդով կարող ենք դուրս գալ փողոց ու կանգնել եկեղեցու կողքին. ինչո՞ւ չեն վախենում այս տարբերակից:

Նրանց թւում է, որ այս հասարակութեան հետ կարող են ցանկացած խաղ անել, ահա թէ ինչ երերուն է դարձել հասարակութեան «շէնքը»:

Երբ գերմանացիք Աուշւիցից հեռացել են, զգալի քանակութեամբ գերիներ դեռ մնացել են այնտեղ, իսկ ռուսները միանգամից չեն եկել, կարծեմ՝ մօտ 10 օր յետոյ: Այդ ընթացքում խեղճ մարդիկ ուժ եւ կամք չեն ունեցել՝ գիտակցելու, որ իրենք արդէն ազատ են ու պէտք է ինքնակազմակերպւեն: Տարրական սնունդ կազմակերպեն, տաքացնեն բարաքները, դուրս գան համակենտրոնացման ճամբարի՝ այլեւս չվերադարձի պարիսպներից:

Մենք հիմա նման վիճակում ենք՝ ժամանակի եւ իրականութեան կորստով՝ մոլորուած, քանդուած:

Իհարկէ, սա էլ է ապրելու ձեւ, եթէ թողնեն, որ գոնէ այսպէս ապրենք, բայց խնդիրն այն է, որ չեն թողնելու, աւելի վատ է լինելու, աւելի մեծ արհաւիրք է լինելու:

Ուրեմն պէտք է փոխել մթնոլորտը, փոխել տրամադրութիւնները: Ինչպէ՞ս:

Մեր միակ ռեսուրսը չլռող շերտն է: Նրանք կան, եւ նրանք քիչ չեն: Բայց կեանքն ապացուցում է, որ այս պայմաններում դա բաւարար չէ: Մենք ունենք պայքարի մենեջմենթի եւ կառուցւածքի լուրջ խնդիր:

Այսօր բոլոր ընտրազանգւածները անտէր են մնացել: Սա դժւար է ընդունել, բայց բանալին այդտեղ է:

Լուծումը Չլռողներից նոր գրագէտ ձեւաչափեր ստեղծելն է, որպէսզի լայն հասարակութեան հետ ստացւի երկխօսութիւն: Չլռողների 90 տոկոսի պայքարի միակ տեղն այսօր կամ սոցցանցերն են՝ կամ տանը փակւած խելագարւելը՝ որպէս արդիւնք հանրային պրոցեսների բացակայութեան:

Հետեւաբար պէտք է ստեղծել համատեղ աշխատանքի ընդունելի ֆորմատներ, որպէսզի չլռող մարդիկ մտնեն պրոցեսի մէջ, յետոյ ներգրաւեն լռողներից նոր շերտերի: Եթէ կայ ապագայ, ապա նոր խելացի ձեւաչափերով է միայն այն հնարաւոր:

Հոլիվուդն առաջարկել է Ալիեւի եւ Էրդողանի մասին քարոզչական ֆիլմեր նկարահանել գումարի դիմաց

ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ
«Կալիֆորնիա կուրիէր» թերթի հրատարակիչ
www.TheCaliforniaCourier.com

«Կազմակերպւած յանցաւորութեան եւ կոռուպցիայի լուսաբանման նախագծի» (OCCRP) հետաքննող լրագրողների խումբը բացայայտել է, որ հոլիվուդեան պրոդիւսերներից մէկը ծրագրել է քարոզչական ֆիլմեր նկարահանել՝ փառաբանելով մի քանի բռնապետ ղեկավարների միլիոնաւոր դոլարների դիմաց:

Ուկրաինական ծագումով, այժմ ԱՄՆ քաղաքացի Իգոր Լոպատեօնոկը, օսկարակիր կինոռեժիսոր Օլիւէր Սթոունի հետ համագործակցութեամբ, սկզբում նկարահանել է երկու վաւերագրական ֆիլմ Ուկրաինայի մասին, որոնք բնութագրւել են որպէս «կրեմլամէտ քարոզչութիւն» եւ ութ մասից բաղկացած չափազանց գովասանական մինի-սերիալ Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւի մասին:

Բացի այդ, Լոպատեօնոկը նախատեսել է նկարահանել մի քանի քարոզչական վաւերագրական ֆիլմեր՝ դրական լոյս սփռելով Ադրբէջանի եւ Թուրքիայի բռնապետ ղեկավարների վրայ, ի թիւս այլոց: Այնուամենայնիւ, պարզ չէ, թէ արդեօք Սթոունը ներգրաււած է եղել առաջարկւող նախագծերից որեւէ մէկում: Այդ վաւերագրական ֆիլմերից ոչ մէկը չի նկարահանւել:

OCCRP-ն յայտարարել է, որ Ալիեւը, Պուտինը եւ Լուկաշենկօն «մեղադրւում են իրենց ղեկավարած երկրների քաղաքացիների դէմ սարսափելի յանցագործութիւնների մէջ... Սակայն այնտեղ, որտեղ աշխարհը դաժան բռնապետեր է տեսնում, Իգոր Լոպատեօնոկը տեսնում է [փող աշխատելու] հնարաւորութիւն»: Քանի որ բռնապետ ղեկավարները պէտք է վճարէին իրենց քարոզչական վաւերագրական ֆիլմերի համար, նրանց դաժան կառավարման մասին խօսք անգամ չէր կարող լինել:

«Լոպատեօնոկի փայլուն առաջարկներից մէկը «Օլիւէր Սթոունի անվերնագիր վաւերագրական ֆիլմը» կամ «Իլհամ Ալիեւի եւ Ադրբէջանի մասին», խոստանում է, որ Սթոունը «դէմ առ դէմ կը նստի» ադրբէջանցի ուժեղ մարդու [Ալիեւի] հետ եւ կը պատմի ոչ միայն «նախագահի՝ պետութեան ղեկավար դառնալու, այլեւ Ադրբէջանի գունեղ ու հրապուրիչ պատմութեան բոլոր հարցերի մասին», հաղորդում է OCCRP-ը:

«Լոպատեօնոկը, կարծես, գտել էր խոստումնալից բանաձեւ: Նա հաւաքել էր սցենարիստների եւ պրոդիւսերների մի փոքր խումբ, որոնք յօրինում էին ֆիլմի գաղափարներ բռնապետերին ներկայացնելու համար, եւ գրաւիչ առաջարկ էին անում՝ երկար ժամանակով յայտնւել էկրանին աշխարհահռչակ ռեժիսորի [Օլիւէր Սթոունի] հետ: Գործընթացը «դրամայնացնելու» բանալին պարզ էր, ասաց թիմի հետ աշխատող աղբիւրը՝ համաձայնելով խօսել լրագրողների հետ գաղտնի մնալու պայմանով: Լոպատեօնոկը հասկացաւ, թէ ինչպէս առաջարկել հզօր մարդկանց մի բան, որին նրանք չէին կարող դիմադրել. օրինականութիւն համաշխարհային հարթակում»,- գրել է OCCRP-ը:

«Օլիւէր Սթոունի վաւերագրական ֆիլմի համար Ալիեւին առաջարկում Լոպատեօնոկն ընդգծում է, որ նախատեսւած ֆիլմը «եզակի դրական ազդեցութիւն կունենայ նախագահի եւ Ադրբէջանի գովազդի վրայ»: Թէեւ պարզ չէ, արդեօք Ալիեւը երբեւէ զբաղւած է եղել այդ առաջարկով, Եւրասիայի հարցերով փորձագէտը նշել է, որ դա համահունչ կը լինի ուժեղ մարդու նախկին ջանքերին՝ իր վարչակարգը ներկայացնելու որպէս տարածաշրջանում դինամիկ, արդիականացնող ազդեցութիւն ունեցող: «Կարծում եմ, որ սա տեղաւորւում է իմիջի մաքրման բոլոր այս պոտենցիալ ուղիների մէջ՝ մշակոյթ, սպորտ, աւելի կարեւորներից են համաշխարհային իրադարձութիւններ, համաշխարհային համաժողովներ»,- ասաց Նիւ Եօրքի Բարնարդ կոլէջի քաղաքագիտութեան պրոֆեսոր եւ Եւրասիական անդրազգային ցանցերի փորձագէտ Ալեքսանդր Քուլին»:

Ակնյայտ է, որ հոլիվուդեան կինոռեժիսորների կողմից Ալիեւի մեծութեան մասին նկարահանւած վաւերագրական ֆիլմը շատ աւելի հաւաստիութիւն կունենայ, քան Ադրբէջանում արտադրւած էժանագին քարոզչութիւնը:

«Երբ բռնապետ ղեկավարները հոլիվուդեան փայլ են ստանում, դա յաճախ լինում է այն մարդկանց հաշւին, որոնց վրայ նրանք իշխում են», ասում է Քէյսի Միշէլը, Մարդու իրաւունքների հիմնադրամի աւագակապետութեան դէմ պայքարի ծրագրի ղեկավարը: Հիմնադրամը տարիներ շարունակ քարոզարշաւ է իրականացրել, որպէսզի Հոլիվուդեան աստղերը դադարեն աշխատել բռնապետական վարչակարգերի հետ: «Ես չեմ կարող պատկերացնել, թէ ինչքան հիասթափեցնող պէտք է լինի Ղազախստանի նման երկրի քաղաքացիների համար... տեսնելով, թէ ինչպէս է այս ամերիկացի ռեժիսորը գալիս եւ դառնում քարոզչական խոսափող իրենց բռնապետերի համար», ասել է Միշէլը: Այս մարդիկ գիտեն, թէ որքան սարսափելի են իրենց վարչակարգերը, իսկ յետոյ դիտում են այս ամերիկացին պարաշիւտով իջնում է, եւ կուլ տալիս դիկտատորների բոլոր քարոզչական խօսքերը, առանց նոյնիսկ անհանգստանալու եւ յետ մղելու»,- նշեց OCCRP-ը:

Այս վաւերագրական ֆիլմերի արտադրութեան ֆինանսաւորումը պէտք է տրամադրւի բռնապետերի «կամ նրանց մերձաւոր մարդկանց կողմից»: 2019 թւականին, երբ Սթոունը եւ Լոպատեօնոկը նկարահանեցին «Ղազախ. ոսկեայ մարդու պատմութիւնը» վաւերագրական ֆիլմը Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւի մասին, նրա կողմից վերահսկւող բարեգործական հիմնադրամը երկուսին վճարեց առնւազն 5 միլիոն դոլար»,- հաղորդում է OCCRP-ը:

OCCRP-ի լրագրողների կողմից ձեռք բերւած փաստաթղթերը ցոյց են տւել, որ Լոպատեօնոկի «խումբը պատրաստել է առնւազն վեց այլ բռնապետական կառավարութիւնների մասին պոտենցիալ ֆիլմերի սցենարներ ներառեալ Չինաստանը, Արաբական Միացեալ Էմիրութիւնները եւ Ռուսաստանի Թաթարստանի հանրապետութիւնը, ինչպէս նաեւ Ալիեւին ու Լուկաշենկոյին ուղղւած առաջարկներ, խոստանալով, որ Սթոունը հարցազրոյց կը վարի նրանց ղեկավարների հետ եւ կօգնի պատմել նրանց «ճշմարիտ պատմութիւնը»:

Լոպատեօնոկի խումբն առաջարկել է, որ Ալիեւի հետ հարցազրոյցի ընթացքում Սթոունը քննարկի

(Շար. 6-րդ էջում)

Հ. Ուս. «Չհարմահալ» միութեան յարկի տակ իրականացաւ «Ակունք» պարային համոյթի տարեկան ելոյթը

Ստիւռքեան պայմաններում հայ ժողովրդի գոյատեւման գրաւականներից է հանդիսանում հայկական մշակոյթի բազմազան ոլորտների պահպանումը եւ այն մեր մատաղ սերընդին փոխանցելը: Այս գործին են լծուած մեծ թւով հայորդիներ, որոնք չեն խնայում իրենց կարելին այս ուղղութեամբ, դիմագրաւելով բազմաթիւ դժւարութիւններ:

Տարիներ է ինչ Հ. Ուս. «Չհարմահալ» միութեան յարկի տակ իր աշխատանքն է ծաւալում «Ակունք» պարային համոյթը, հայ մատաղ սերընդի սաներին սովորեցնելով հայկական մշակոյթը, ինչու չէ նաեւ պարարուեստի տարբեր ժանրերը:

«Ակունք» պարային համոյթի գեղարուեստական ղեկավար եւ բեմադրիչն է Կարինէ Մանուչերեանը: Պարախումբը ունենալով տարիքային տարբեր խմբեր օժտուած է օգնականներով եւ փորձավարներով, թիւ 3 եւ թիւ 4 խմբերի փորձավարները եւ օգնականներն են՝ Փրենի Խաչատրրեանը եւ Նինէլ Շահնազարեանը:

Թւականիս մարտի 8-ի երեկոյեան Հ. Ուս. «Չհարմահալ» միութեան «Յովհ. Թումանեան» սրահում, հանդիսատեսը հաղորդակից դարձաւ նոյն միութեան յարկի տակ երկար տարիներ աշխատանք ծաւալող «Ակունք» պարային համոյթի տարեկան ելոյթին:

Քանի որ այդ օրը համընկնում էր կանանց եւ գեղեցկութեան համաշխարհային տօնին, սրահի մուտքին ներկաներին ծաղիկներով դիմաւորում էին պարախմբի ծնողական խորհրդի անդամուհիները: Մօտաւորապէս երկժամեայ կատարումներով, համոյթի սաները՝ տարիքային տարբեր բաժանումներով, գունազարդ հագուստներով եւ իրարայաջորդ ներկայացումներով, հանդիսատեսին հրամցրին հայկական աւանդական եւ խրոխտ մարտական պարերը, ինչու չէ նաեւ այլ ազգերի մշակոյթը ներկայացնող պարեր:

Յատկանշական է, որ կատարումներից վերջինը՝ Արցախի Եարխուշտան նւիրւեց վերջերս իր մահկանացուն կնքած «Կարին» աւանդական երգի-պարի խմբի հիմնադիր եւ գեղարուեստական ղեկավար, Հայաստանի մշակոյթի վաստակաւոր գործիչ եւ Արցախեան ազատամարտի մասնակից Գագիկ Գինոսեանի յիշատակին:

Հանդիսութեանը ներկայ էին՝ Տ. Սահակ քհնյ. Խոսրովեանը, ազգային իշխանութեան, մարմինների, միութիւնների, «Ալիք» օրաթերթի ներկայացուցիչներ, հայոց դպրոցների հայ տեսուչներ եւ հանդիսատեսներ:

Կատարումների աւարտին, «Ակունք» պարային համոյթի գեղարուեստական ղեկավար եւ բեմադրիչ՝ Կարինէ Մանուչերեանը, նախ շնորհաւորեց Մարտի 8-ի առիթով եւ իր գնահատանքի խօսքը ուղղեց Հ. Ուս. «Չհարմահալ» միութեանը, ծնողներին, հիւրերին եւ բոլոր նրանց, որոնց անմնացորդ ջանքերի շնորհիւ հնարաւոր է դառնում իրականացնել ելոյթը: Իր ելոյթի ընթացքում Կարինէ Մանուչերեանը ընդգծեց. «Նման պայմաններում բոլորս մեր սահմաններում փորձում ենք իրականացնել մեր կարելին յանուն մեր ժողովրդի, իսկ մենք պարարուեստի միջոցով ենք ջանում իրականացնել այս կարեւոր հանգամանքը: Պարային կատարումներում լռում ենք, բայց քայլում ենք, հզօր ծափերով փորձում ենք թշնամուն հեռու պահել, ոտքով զարկում ենք հատակին, որը խորհրդանշում է զարկ թշնամուն եւ վերջում պարում յաղթական պար»: Նա իր խօսքերի աւարտին «Ակունք» պարային համոյթի անունից շնորհաւորելով Իրանի Իսլամական խորհրդարանում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր Արա Շահվերդեանին վերընտրւելու համար, հրաւիրեց պատգամաւորին իր խօսքը փոխանցելու: Պատգամաւոր Արա Շահվերդեանը նախ իր գնահատանքը յայտնեց «Ակունք» պարախմբի գեղարուեստական ղեկավար եւ բեմադրիչ Կարինէ Մանուչերեանին եւ պարախմբի սաներին իրենց կատարումների համար: Նա, անդրադառնալով Կարինէ Մանուչերեանի ղեկավարած պարային այլ խմբերին ընդգծեց, որ առիթ է ունեցել Հ. Մ. «Սիփան» միութեան յարկի տակ ականատեսը լինելու նրա ղեկավարութեամբ «Սիփան» եւ Թաւրիզում «Տաթեւ» պարախմբերի ելոյթներին եւ ուժ ու կորով մաղթեց Կարինէ Մանուչերեանին եւ խմբերի սաներին: Պատգամաւորը անդրադառնալով հայկական պարի խորհրդին, նշեց, որ այն փոխանցում է մարտունակութիւն եւ միասնականութիւն, որը տարբեր մարտահրաւէրները դիմագրաւելու գրաւականն է եւ յաւելեց, որ նման միասնականութեամբ է հնարաւոր յաղթահարել դժւարութիւնները: Արա Շահվերդեանը իր շնորհակալութիւնը յայտնեց հայրենակիցներին, որոնք Իսլամական խորհրդարանական ընտրութիւններին մէկ անգամ եւս վստահել են իրեն եւ ընդգծեց, որ առաւել ուժ ու եռանդով շարունակելու է իր աշխատանքը:

Միջոցառման աւարտին գնահատեցին համոյթի սաները:

Թղթակցութիւնը կազմեց
ԿԱՐԻՆԷ ԴԱՒԹԵԱՆԸ



**Բարեւ
Քեզ
Ու
Ձեզ
Ճանօթ-անծանօթ իմ սիրելիներ:
Թող անկարելին դառնայ
կարելի
Աշխարհում համայն,
Ամենքի համար,
Դառնայ կարելի վաղն ու հէնց
Հիմա,
Դառնայ կարելի մէկ բառով
Բարեւ...**

Պարոյր Սեւակ

ԳՐՈՒՄ ԵՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

Գրում են «Մարի Մանուկեան» աղջ. միջն. դպրոցի աշակերտուհիները

Մի ստիպիր

ԱՆԱՅԻՍ ԱՒԱՆԷՍԵԱՆ

*Մի ստիպիր ինձ, որ զգամ
Հոգուս վիշտը լճացած,
Որ վաղուց է կուտակուել
Մայրական տանս համար:*

*Մի ստիպիր ինձ մոռանալ
Հայի որդուն քարկոծուած
Զոհուածի փառքը անմահ
Մեր արեգակը մթնած:*

*Մի ստիպիր չպահպանեմ
Արշալոյսը հաշտութեան
Քանզի նրա շողքի տակ
Յաղթութիւն է քնած:*

*Մի ստիպիր ինձ վախենամ,
Լռեմ ու մեկուսանամ
Անմոռուկը մեր ծաղկած
Իմ բռունցքում է պարզած:*

*Մի ստիպիր ինձ մոռանալ
Հայի որդուն քարկոծուած
Զոհուածի փառքը անմահ
Մեր արեգակը մթնած:*

*Մի ստիպիր, որ սգամ
Յոյսիս կապը կտրուած
Հայը դա այն ազգը չէ,
Չենք յանձնուի մենք երբեք:*

*Մի ստիպիր չպահպանեմ
Արշալոյսը հաշտութեան
Քանզի նրա շողքի տակ
Յաղթութիւն է քնած:*

*Եւ որքան պիտի ասեմ
Մի ստիպիր անօգուտ է
Մենք յուսահատուող չենք
Ընդմիշտ բռունցք կը պարզենք:*

Աշնանային անտառը

ՓՈԼԵՏ ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆ

Ամէն ինչ կամաց-կամաց կորցնում է իր գոյնը: Անտառն իր վերջին երգն էր երգում, որ գունատուելով դառնար սպիտակ:

Այդ տերեւների ամբոխի մէջ միայն ու միայն ես էի կանգնած, զգում էի քամու մեղմ խաղը մազերիս մէջ, բայց քիչ անց այդ ամէնը ինչ խորթ թւաց:

Քամու օրօրն սկսեց ինձ դուր չգալ: Այդ հաճելի քամին մի ակընթարթում դարձաւ սառը, կոշտ ու կոպիտ մի ձեռք, որը փորձում էր ինչ-որ կայ գետնի վրայ բարձրացնել ու հարուածել գետնին: Քամու զայրոյթն սաստիկ էր:

Նրան յաջորդեցին ամպերը: Միացան իրար ու ճառագայթեցին: Կարծես ամպն ու քամին ոխերիմ թշնամիներ լինէին, որ եկել էին պատերազմելու, իսկ պատերազմի դաշտը անտառն էր:

Նրանք ցուցադրում էին իրենց լաւագոյն ուժերը: Մէկը գետնից դէպի վեր էր հանում ծառերը, իսկ միւսը իր կայծակներն էր ուժգին հասցնում գետնին:

Բայց հասաւ ժամանակը կռի աւարտի: Խաղաղութեան անձրեւն իր գիրկն առաւ, թէ՛ ամպերին, թէ՛ քամուն ու թէ՛ կատաղից տուժած անտառին: Առաւ իր գիրկն մօր նման ու հանդարտեցրեց բոլորին:

Մինչեւ լոյս իր լացով լաւց ատելութիւնն ու ցաւը եւ երբ բացուեց առաւօտը, կարծես թէ ոչինչ չէր պատահել, թէ՛ տերեւներն էին գետնին, եւ թէ՛ ամպերն էին խաղաղ երկնքում լողում:

Բաց նամակ իմ արցախցի ընկերոջը

Բարի Ամանոր

Ողջո՛յն սիրելի ընկեր՛, ո՞նց ես, ինչպէ՞ս են անցնում քո օրերը տնից հեռու, արդեօք կարողացե՞լ ես համակերպուել այդ վիճակի հետ:

Գիտե՞ս վերջերս որքա՛ն եմ քեզ յիշում եւ քո մասին մտածում, որքա՛ն է տանջում ինձ այն միտքը, որ Արցախը տակն ու վրայ եղաւ եւ կործանուեց, ճիշտ է, գուցէ ես այնտեղի քաղաքացի չէի, բայց, ոնց որ իմ սիրտը այնտեղ էր պատկանում եւ այնտեղ էր բնակւում, հեռից-հեռու զգում էի այն ցաւը, որ դու էիր զգում, եւ հասկանում ու ընդունում եմ քո վիշտը ու տառապանքը:

Իմանում եմ թէ որքա՛ն ես կարօտել քո սիրելի տունը, որքա՛ն ես յուսահատուել եւ ողբացել: Այո, ճիշտ է դու հեռացար քո բնակավայրից, բայց քո մանկութեան յուշերը մնացին այնտեղ: Ուզում եմ մի բան խնդրել, մի՛ յուսահատիր ամէն մարդ ունի իր ճակատագիրը, իւրաքանչիւր մարդ ունի փորձութիւններ եւ այն յաղթահարելով են ուժեղանում ու կայուն մարդ դառնում: Սա էլ քո փորձութիւնն է, ուրեմն ջանացիր եւ յաղթահարիր, քանզի ուժեղ եւ յաջողակ ես:

Ամանորի օրերը մօտ են եւ ես քեզ մաղթում եմ առողջութիւն, որ այս գալիք տարին դու վերականգնուես եւ հաւատաս քո ուժերին՛ մի նոր յոյս արթնանայ քո մէջ շարունակելու ապրել եւ բարգաւաճել:

Մինչ իմ յաջորդ նամակին անհամբեր կը սպասեմ քո պատասխանին:

Քո սիրելի ընկեր՝ Անայիս
Դեկտեմբերի 16, 2023 թ.

Անայիս Աւանէսեան
10-րդ դասարան

Պաղեստինի ժողովրդին նւիրուած աղօթք՝ Հայ Աւետարանական եկեղեցում Արա Շահվերդեանի մասնակցութեամբ

Իսլամական խորհրդարանում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր Արա Շահվերդեանի գրասենեակից տեղեկանում ենք, որ պատգամաւորը կիրակի, մարտի 10-ին ներկայ է գտնուել Թեհրանի Հայ Աւետարանական եկեղեցում իրականացող արարողութեանը, որը գլխաւորում էր Հայ Աւետարանական եկեղեցու հոգեւոր հովիւ Վերապատուելի դոկտ. Միշէլ Աղամալեանը:

Արարողութեան ընթացքում ընթերցուեց կանանց համաշխարհային աղօթքը նւիրուած՝ Գազայի զոհերի յիշատակին, խաղաղութիւն մաղթելով Պաղեստինին:

Յատկանշական է, որ օրեր առաջ նաեւ, Հայ Աւետարանական եկեղեցու հոգեւոր հովիւ Վերապատուելի դոկտ. Միշէլ Աղամալեանը, այցելել էր պատգամաւոր Արա Շահվերդեանի գրասենեակ, յաջողութիւն մաղթելով չորսամեայ առաքելութեան աշխատանքներում:

ՈՒՐԿԷ՞ ՀԱՍԱՆՔ, ԴԷՊԻ Ո՞ՒՐ – 1

«ՉԵ՛Ն ԸՆԵՐ, ՃԱ՛ՆԸՄ». ԲԱՅՑ ԸՐԻ՛Ն...

Հազար ու մի վերք ես տեսել,- էլի՛ կը տեսնես...
(...)Աշնան քաղած արտի նման՝ Հազար զոհերի
Չհաւաքուած բերք ես տեսել,- էլի՛ կը տեսնես:
Ե. ՉԱՐԵՆՑ

(Շարունակութիւն նախորդ համարից)



- Երկիրը վերածուեցաւ ռազմական բռնապետութեան, երբ անդին, խօսքի ազատ տեղի կունենար (հիմա ալ տեղի կունենայ, գնո՛ղ ալ կայ), թէ Հայաստանի մէջ օրինակելի՛ ժողովրդավարութիւն կը կիրարկի: Բաստիոնին մէջ է որ կը կրկնուին... ընդդիմադիրներու դէմ հալածանքները, կը բազմանան քաղաքական բանտարկեալները, անհիմն ու յերիւրածոյ մեղադրանքներ կարձակուին ճշմարտախօս հակառակորդներու դէմ, խաղաղ ցուցարարներ եւ նահատակներու մայրեր ասֆալթ «կը համտեսեն», քէարկութեամբ ընտրուած ընդդիմադիրներ պաշտօնէ կը հեռացուին, կը բանտարկուին, արդարութիւն պահանջող արցախցի ցուցարարներ իսկ կը խոշտանգուին...:

- Ժողովուրդը մատնեցին երկփեղկումի (երկփեղկումը մեղմ բառ է, կրնանք ըսել՝ բազմափեղկում), այս «տրամաբանութիւնը» տարածեցին նաեւ դէպի Սփիւռք եւ անոր համար գործի լծեցին յատուկ յանձնակատար մը...: Անցեալին ալ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները անթերի չէին, բայց գոնէ կար ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ մակարդակի գործ (հիմա պէ՞տք է երանի տանք նա՛ եւ այդ օրերուն, ինչպէս որ երանի կու տանք... 9 նոյեմբերի յայտարարութեան):

- Ազգային արժէքներ եւ աւանդներ դարձան խաղալիք. Եկեղեցին դարձաւ հալածանքի, վարկաբեկումի եւ անտեսումի թիրախ (աղանդաւորականներու եւ օտարամուտ տարրերու հետ գործակցութեամբ): Հայագիտութիւնն ու մեր մշակոյթին հարազատ պահպանման հիմերը հարուածներու տակ ինկան, սկսելով համալսարաններէն, հասնելով մինչեւ միջնակարգի եւ այլ դասագիրքերը: Դարաւոր խորհրդանիշ Արարատը դարձուցին օտարումի նիւթ, փորձեցին «մրցակցութիւն» ստեղծել Արարատի եւ Արագածի միջեւ, ձեւով մը յետին էջ նետելով Սիփանն ու Նեմրութը, Հայկական Տաւրոսն ու Սասունը: Հիմա ո՞վ կը խօսի Մուսա Լեռան եւ Կիլիկիոյ բարձունքներուն՝ Զէյթունի, Վահկայի եւ այլ ամրոցներու մասին...

- 44-օրեայ պատերազմին թէ Արցախի վերջին մասնիկին խլման օրերուն գերի ինկողները ու պատանները մոռացութեան մատնուած են, իսկ երբ ազերի զինուոր մը «կը մոլորի» եւ հայկական հող կը հասնի, քանի մը օր ետք, «բարի կամք արտայայտելով»՝ կը վերադարձուի Բաքու, ինչպէս որ ըրին մօտիկ անցեալին՝ ազերի ռճրագործներու վերադարձով, այսպէսով յաւելեալ վառելանիւթ հայթայթելով Ադրբէջանի նախագահին ու անոր քարոզչական մեքենային յոխորտանքներուն: Անոնք այլեւս բացայայտօրէն, բանի՛ւ եւ գործով ցոյց կու տան, որ Հայաստանի իշխանական խումբը միայն մէկ ճամբայ ունի, լիովին կատարել իրենց պահանջները, իրականացնել բոլոր նախապայմանները:

- Տնտեսութեան եւ հասարակական հարցերու տագնապները ունին իրենց ողբերգական պատմութիւնը: Ուկրանիոյ պատերազմին հետեւանքով, պահ մը Հայաստան «ապաստանած» դրամագլուխներ, ըստ մասնագէտ տնտեսագէտներու, արդէն իսկ սկսան եւ «արտագաղթել», ինչպէս կրնան ապրուստի դժուարութիւններու մատնուած հայորդիներ, Հայաստան բռնագաղթուած արցախցիներէն մաս մը: Ապրուստի ստութիւնն ու հարկային կամայականութիւնները այլ ցուցանիշեր են հասարակական-տնտեսական դժուարութիւններու ծանրացման: Հոս ալ կարելի է արձանագրել քանի մը «մանր» յաւելուած, ինչպէս փոխադրածախսերու յաւելումը, Երեւանի քաղաքամէջի կանգառներուն՝ կարմիր գիծերու սակերուն բարձրացումը եւ հոսհոն «բարեփոխման ծրագիրներու» համար բնակարաններու քանդումները (մոռցուած յաւելուածնե՞ր կուզէք. պայթումի եւ արկածներու հետեւանք՝ քանդումներն ու աղէտները):

- Տնտեսութեան ոլորտին մէջ, երկրին ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ նահանջի մէջ է: Օր մը կը լսես, որ ձկնորսները իրենց տարտը կու լան, ուրիշ օր՝ այգեգործները, այս կամ այն պտուղը արտադրողներ, երրորդ օր մը՝ ջուրի սակաւութենէ տառապողներ, ուրիշ օր՝ երկրագործական արտադրութիւնը շուկայ հասցնելու անկարող մնացողներ, մէջ ընդ մէջ ալ՝ Վրաստանի սահմանակայանին փակումներուն զոհ գացողներ:

- Արտաքին քաղաքականութեան՝ յարաբերական կալուածը ունի ի՛ր բազմերես ողբերգութիւնները: Արեւմուտքի հետ իբրեւ թէ նոր յարաբերութիւններ, կամուրջներ հաստատելու համար, հարուածներ կը հասնին նախկին բարեկամութիւններու, կամ կրաւորականութիւն կը ցուցաբերուի այլ դրացիներու նկատմամբ: Կարծէք թէ Հայաստանը նոր է որ լաւ յարաբերութիւններ կը մշակէ արեւմտեան երկիրներու հետ, մոռացութեան կը տրուի, որ անցեալին, երկու աշխարհներուն հետ ալ կային գործակցական եւ որոշ չափով հաւասարակշռուած յարաբերութիւններ (չենք անտեսեր հակադրութիւններու սաստկացումը, սակայն երբ ուրիշներ հին խաղը կը յարմարցնեն նոր կացութիւններուն...): Անցեալին վերագրուած ստաբանութիւններուն եւ անհիմն հաստատումներուն ծիրին մէջ կրնանք արձանագրել նաեւ... Ալմա Աթայի համաձայնութեան «գիւտը»: Իսկ եթէ հոս ալ ուզենք փնտրել «մանր յաւելուածներ», կրնանք գտնել առատութեամբ, գոնէ յիշենք Թուրքիոյ երկրաշարժէն աղէտեալներուն շուտափոյթ օգնութիւն հասցնելը (արցախցիք իսկ նման փութկոտ աջակցութեան չեն արժանանար, մինչեւ իսկ Հայաստանի քաղաքացիութենէ կը զրկուին...), Ուկրանիոյ ժողովուրդին օժանդակութիւն հասցնելը, հիմա ալ... Գազայի աղէտնեալներուն օգնութիւն տրամադրելու պատրաստակամութիւնը: Միայ չհասկցուինք աղէտեալին օգնելը առաքինութիւն է, Հայաստանը հարուածող աղէտներուն ատեն՝ շատեր օգնութեան ձեռք երկարած են, սակայն երբ Երեւանի իշխանաւորներուն կողմէ նման քայլերու ետին կերեւին թելադրողներուն կոտոշները, «կարմիր շորերով ցուլերու դիմաց քայլելու» ա՛յլապէս անմիտ պատկերը իր իրական իմաստը կը ստանայ:

- Դիւանագիտական անճարակութիւնն ու հանրութիւնը խաբէութիւններով զբաղեցնելու հնարքներն ալ անսպառ են: Մէկ կողմէ, եւ ամբոխահաճ դիտաւորութեամբ, թուրքն ու ազերին կը հռչակուին ցեղասպան, պատերազմի սպառնալիք տեղացնող, Հայաստանի հողերը գրաւելու պատրաստողներ, իսկ յաջորդ վայրկեանին, նոյն այդ սպառնալիքները արձակողներուն հետ սիրալի՛ր բանակցութեան կը նստին Բրիւսէլի կամ Մունիխէնի մէջ, հլու կամակատարի տրամադրութեամբ, Արեւմուտքէն հասնող ազդանշաններու թելադրանքով (որոնք, ի՛նչ զարմանք, համահունչ են թուրք-ազերիական ծրագիրներուն):

- Եւ որպէսզի հանրութիւնը «զբաղումի նիւթէ» չզրկուի, կայ «մանրադրամներու սակարան», ուր մերթընդմերթ կը բեմադրուին... դպրոցներու ծորակներու եւ խաղավայրերու խեղկատակութիւններ, փողոցներու երկայնքին նոր ծառերու տնկում, ճամբաներու՝ քանի մը ամիս դիմացող կուպրապատում, նախարարի, փոխ նախարարի պաշտօնազրկում, յատուկ դեսպանի հրաժարական, խորհրդարանի նախագահի եղբօր կնոջ գործակիցներու հետապնդում եւ արդարացում. եւ ասոնք կը ծառայեցին էական հարցերու լուսանցքայնացման, մոռացութեան տուելուն (շարքը դո՛ւն շարունակէ, սիրելի՛ ընթերցող): Փաստօրէն, ո՞վ կը յիշէ, թէ մեծ քանակութեամբ թմրեցուցիչ «բռնուած» էր, քնութիւն բացուած, յետոյ... մոռցուած՝ շատ ու շատ, եւ աւելի՛ ծանրակշիռ օրինազանցութիւններու, ողբերգութիւններու պէս:

ԸՐԻՆ, ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ

Ինչ որ արձանագրեցին վերը, զրպարտութիւն, յերիւրածոյ վերագրումներ չեն, այլ ՓԱՍՏ են ու արձանագրուած՝ ՊԱՏՄԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ: Ցանկը շա՛տ երկար է, ամէն օր նորերով կը հարստանայ անարգել եւ անպատկառ քայլերով:

Երբ նման քայլերու մասին անցեալին ահազանգեր հնչեցին բանիմացներու եւ հայրենասէրներու կողմէ, իշխանութեան համակիրներ ըսին. «Մի՛ չափազանցէք, ճա՛նըմ: Ասոնք հայրենասէր են, հայրենիքի բարելաւումը կը ցանկան, անանկ բան չեն ըներ»: Հիմա, 3-4 տարի ետք, վերի փաստերուն պէս բազմաթիւ այլ փաստեր կան, որոնք սկսած են խելամտութեան բերել իշխանաւորներուն բազմաթիւ «սիրահարները»:

Այսօ՛ր ալ ահազանգերը կը կրկնուին ու կահագնանան. այսօ՛ր ալ «ասոնք վաղը այս-այն կործանարար քայլը պիտի առնեն» ըսողներուն՝ կարգ մը սիրահարներ (որոնց շարքին կան բազում կամակատարներ, շահակիցներ) կը փորձեն տարածել այն «տեսութիւնը», թէ ընդդիմադիրները կը չափազանցեն: Փաստը, սակայն, կը մնայ փա՛ստ: Այս արարածները յիշեալ բոլորը ըրի՞ն: Այո՛, ըրի՛ն, վրան ալ քանի մը գաւաթ պաղ ջուր խմեցին (երբեմն ալ «Հայաստանի կարմիր գինին» երգելով գինովցան): Վաղն ալ պիտի ընե՞ն այն՝ որմէ կը զգուշացնեն բանիմացներ, հայրենասէրներ: Այո՛, որովհետեւ ուրիշ բան չեն գիտեր ընել, որովհետեւ... ուրիշ բանի համար չեն բերուած իշխանութեան ղեկին:

Իսկ թէ ինչե՞ր կան անոնց «ճաշացուցակին» վրայ, բոլորն ալ թելադրուած՝ իրենց դրսեցի տէրերէն (եւ այդ տէրերուն շարքին են Անկարան եւ Բաքուն)՝ կը կարօտի նոր սիւնակի մը: Յաջորդիւ:

Ս. ՄԱՀՍԷՐԷՃԵԱՆ
3-10 մարտի 2024
(Շար. 2 եւ վերջ)

Կրեմլը մեկնաբանել է Փաշինեանի՝ ՀԱՊԿ-ից դուրս գալու հնարաւորութեան մասին յայտարարութիւնները

Մոսկուան լսել է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի յայտարարութիւնները Հայաստանի՝ ՀԱՊԿ-ից դուրս գալու հնարաւորութեան մասին, դեռ շատ աշխատանք կայ, իրավիճակի պարզաբանման համար անհրաժեշտ են շփումներ: Այս մասին ասել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը,- գրում է «ՌԻԱ Նովոստի»-ին:

«Իհարկէ, մենք լսել ենք Փաշինեանի յայտարարութիւնները: Ակնյայտօրէն, իհարկէ, հիմա շատ աշխատանք կայ անելու: Մեզ անհրաժեշտ են շփումներ ինչպէս ՀԱՊԿ շրջանակներում, այնպէս էլ երկկողմ մակարդակով մեր հայ գործընկերների հետ: Մենք կը պարզաբանենք եւ կը խօսենք վարչապետի արած յայտարարութիւններին համահունչ», - ասել է Պեսկովը:

Հարցին, թէ ինչպէս է ՀԱՊԿ-ը վերաբերւում Փաշինեանի նման յայտարարութիւններին, Պեսկովը պատասխանել է, որ Կրեմլը չի կարող խօսել կազմակերպութեան անունից:

Yerkir.am

Հոլիվուդն...

(Շար. 3-րդ էջից)

«երկրի յաջողութիւնը» Ալիեւների ընտանիքի «ժառանգական իշխանութեան» ներքոյ եւ նրա շարունակական հակամարտութիւնը «Հայաստանի հետ, որը կորցնում է իր կայունութիւնը եւ տատանւում է անդունդի եզրին»: Առաջարկւող ֆիլմի ամփոփումից պարզ է դառնում Լոպատեօնոկի մօտեցման ուղղութիւնը. այն Ալիեւին նկարագրում է որպէս իր հօր՝ նախորդ նախագահի «արժանի ժառանգորդ», որը նրան սովորեցրել էր լինել «իմաստուն ղեկավար»: «Կարո՞ղ էք արդեօք Ադրբէջանում գոյութիւն ունեցող պետական համակարգը անուանել «անձի պաշտամունք», թէ՞ դա պարզապէս ժողովրդի յարգանքի տուրքն է մի ղեկավարի նկատմամբ, որը կարողացաւ երկիրը աղքատութիւնից վերածել ծաղկող եւ բարգաւաճող երկրի»: Ըստ OCCRP-ի՝ Ալիեւի մասին ֆիլմը կարժենայ 15 միլիոն դոլար:

Լոպատեօնոկը 2021 թւականին Բաքու կատարած այցի ժամանակ ասաց ադրբէջանական լրատուամիջոցներին. «Այս երկիրը [Ադրբէջանը] ունի շատ հարուստ եւ գունեղ մշակոյթ: Երբ ես այստեղ էի 2012-2013 թւականներին, սովորեցի տարբերել դարաբաղեան գորգերը միւսներից՝ նոյնացնելով [դրանք] իրենց զարդանախշերով: Ադրբէջանի մասին լաւ ֆիլմ կը նկարահանէի»:

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի մասին պատմող ֆիլմի մէկ այլ սցենար կար, որը «նրան հնարաւորութիւն էր տալու պաշտպանել թուրքական շահերը»: Ահա թէ ինչ է ասւում սցենարում. «Էրդողանը թուրք է, եւ դժուար թէ նրան անհրաժեշտ լինի իր գործողութիւնները հիմնաւորել այլ երկրների շահերով: Բայց ի՞նչ շահեր ունի նա: Կարո՞ղ է նա վերականգնել Մետաքսի մեծ ճանապարհը: Եւ արդեօք նա ծաւալապաշտական ծրագրեր ունի՞: Ինչի՞ է փորձում հասնել Էրդողանը: Այս հարցերին ինքը պէտք է պատասխանի: Եւ միայն ինքնը: Մենք չպէտք է փորձենք գուշակել [Էրդողանի ծրագրերը] սուրճի մրուրից, նոյնիսկ եթէ դա հիանալի թուրքական սուրճ է, որը նրանք գիտեն պատրաստել միայն Ստամբուլում»:

«2018 թւականին տւած հարցազրոյցում Իբրահիմ Քալինը, որն այն ժամանակ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի խօսնակն էր, հաստատեց, որ իրենք Էրդողանի մասին վաւերագրական ֆիլմի առաջարկ են ստացել, մօտաւորապէս այն ժամանակ, երբ Սթոունը գտնւում էր Թուրքիայում: «Մենք քննարկում ենք այն, մենք գնահատում ենք այն», ասաց նա»,- հաղորդում է OCCRP-ը:

Թարգմանութիւնը՝
ՌՈՒԶԱՆՆԱ ԱՒԱԳԵԱՆԻ

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՇԻՐԻՄԻՆ

Խոր վշտով համակուած յայտնում ենք մեր շատ սիրելի եւ թանկագին՝

ՎԻԳԷՆ ԲԵՀՐՈՒՋԻԻ

ցաւալի մահը, որը տեղի ունեցաւ մարտի 2-ին, Ամերիկայում:

Հանգուցեալի մահուան առթիւ, ուրբաթ, մարտի 21-ին, այցելութիւն կը տրուի հանգուցեալի հօր շիրիմին եւ կը կատարուի՝

ԱՅԳՈՒՅԻ

արարողութիւն:

Ցանկացողներից խնդրում ենք նոյն օրը՝ առ. ժամը 9:30-ին ներկայ գտնուել ներքոյիշեալ հասցէին՝ գերեզմանատուն մեկնելու համար:

ՀԱՍՑԷ՝

Հարաւային Մաջիդիէ, Հարաւային 20-մետրանոց պող., համար 107:

Ցաւակցութիւնները՝ գերեզմանատանը եւ Մ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցուն կից «Եարիջանեան» սրահում:

ՍԳԱԿԻՐՆԵՐ՝

Ժերմէն Հաթումեան՝ այրին:

Աւօ եւ Սեղա Բեհրուզիներ՝ եղբայրը եւ իր կինը՝ ընտանեօք:

Անահիտ եւ Արմենակ Շահբազեաններ՝ քոյրը եւ իր ամուսինը՝ ընտանեօք:

Կարինէ եւ Յովիկ Աբեղեաններ՝ քոյրը եւ իր ամուսինը՝ ընտանեօք:

ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

Այսու Հ. Մ. Մ. «Նայիրի» միութեան վարչութեան եւ անդամների անունից ջերմօրէն շնորհաւորում ենք **Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր յարգելի՝**

պրն. Արա Շահվերդեանին,

Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր յարգելի՝

պրն. Գեղարդ Մանսուրեանին՝

Իրանի Իսլամական խորհրդարանի 12-րդ նստաշրջանի ընտրութիւններին ընտրուելու կապակցութեամբ:

Իրանահայութեան զոյգ պատգամաւորներին մաղթում ենք յաջողութիւն եւ ուժ ու կորով այս դժուարին եւ պատասխանատու աշխատանքում:

Հ. Մ. Մ. «ՆԱՅԻՐԻ» ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ԱԼԻՔ
Օրաթերթ

Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԵՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک
روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ – ۸۸۷۶۸۵۶۷ چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994
E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir

ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ
ԼՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՒԱՑՈՂ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ՝
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան

Computer AGMA
Համակարգչային ընկերութիւն
خرید و فروش کامپیوتر
ارتقاء سیستم
سرویس در محل
سخت افزار
نرم افزار
شبکه
Tel: 88849305 & 88842385
ایرانشهر شمالی، کوچه نوشهر، پلاک ۳۲، واحد ٦

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել

«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը

(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համադրելու խնդրանօք)՝ հետեւեալ հասցէով.

Հիւսիսային Սոհրեւարդի պող., Մոհեբի փողոց, համար 16

Հեռ.՝ 88761154

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ

ԱԼԻՔ-ի
Internet-ային էջն է՝
www.alikonline.ir

ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

«Կակաչ» պարախմբի մեծ ընտանիքի անունից ջերմօրէն շնորհաւորում ենք յարգելի

պրն. Արա Շահվերդեանին՝

Իրանի Իսլամական խորհրդարանի 12-րդ նստաշրջանի ընտրութիւններում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր վերընտրուելու կապակցութեամբ:

Մաղթելով ուժ ու կորով եւ նորանոր յաջողութիւններ:

«ԿԱԿԱՉ» ՊԱՐԱԽՄԲԻ ԳԵՂԱՐՒԵՍՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԵՒ ՀԻՄՆԱԴԻՐ՝ ԱՐՈՒՍ ՍԱՐԳՍԵԱՆ-ԱՒԱԳԵԱՆ ԽՄԲԻ ՊԱՐՈՒՍՈՅՑ, ՓՈՐՁԱՎԱՐ ԵՒ ԲԵՄԱԴՐԻՉ՝ ԱՐՄԻՆԷ ԱՒԱԳԵԱՆ

ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

Այսու ջերմօրէն շնորհաւորում ենք

Արա Շահվերդեանին՝

Իրանի Իսլամական խորհրդարանի 12-րդ նստաշրջանի ընտրութիւններում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր վերընտրուելու կապակցութեամբ:

Մաղթելով ուժ ու կորով եւ նորանոր յաջողութիւններ:

ՍՐԲ. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ԿԱՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ

ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

Իրանի Իսլամական խորհրդարանում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր յարգելի

պրն. Արա Շահվերդեան,

սրտանց շնորհաւորում ենք Ձեզ՝

Իրանի Իսլամական խորհրդարանի 12-րդ նստաշրջանի ընտրութիւններում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան կողմից պատգամաւոր ընտրուելու առթիւ:

Մաղթում ենք յաջողութիւն եւ ուժ ու կորով այս դժուարին եւ պատասխանատու աշխատանքում:

ՎԻԳԷՆ ԵՒ ԱՆԺԷԼ ԱՄԻՐԵԱՆՆԵՐ՝ ԸՆՏԱՆԵՕՔ

ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆՔ
«Էմմա»
գեղեցկութեան սրահը
կարիք ունի
երկու հմուտ մատնայարդարողի
ناخن کار ماهر
Հեռ.՝ 88325523 - 88308310 - 09194444473

ՆԵՄԵՍԻՍ ԱՍՏԻԱԾՈՒՀՈՒ ՀԱՅ ՔՐՄԱՊԵՏԸ ՅԱՒԵՐԺԱՑԱՒ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Մարսէլում բացուել է Սողոմոն Թեհլիրեանի յուշարձանը

«Նեմեսիս» գործողութեան մասնակից, հայ վրիժառու, Հայոց Ցեղասպանութեան վերապրած Սողոմոն Թեհլիրեանի յուշարձանը տեղադրուել է Ֆրանսիայի Մարսէլ քաղաքում:

Մարտի 15-ին Մարսէլի հայաշատ Պոմօն թաղամասի Pasteur հրապարակում հանդիսաւորութեամբ տեղի է ունեցել յուշարձանի բացման հանդիսաւոր արարողութիւնը:

Միջոցառման ընթացքում ֆրանսահայ երեխաները երգել են «Գինի լից» երգը, պաստառներ պահել իրենց ձեռքերում, որոնցից մէկի վրայ գրած էր՝ «Թեհլիրեան արդարադատ»:

2017 թւականին Մարսէլում հրապարակներից մէկը պաշտօնապէս անուանուել է հայ վրիժառուի անունով:

Սողոմոն Թեհլիրեանը ծնուել է 1897 թւականին՝ Արեւմտեան Հայաստանի Երզնկա գաւառում: Առաջին Համաշխարհային պատերազմը սկսուելուն պէս մեկնել է Հայաստան, ուր մասնակցել է կամաւորական շարժմանը Անդրանիկ Օզանեանի գնդում:

1915 թւականին վերապրել է Ցեղասպանութիւնը, 1921 թւականի մարտի 15-ին Բեռլինում գնդակահարել է Հայոց Ցեղասպանութեան գլխաւոր կազմակերպիչ, Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալէաթ փաշային: Նոյն տարւայ յունիսի 2-ին Թեհլիրեանին գերմանական դատարանն անպարտ է ճանաչել, ինչից յետոյ վերջինս մեկնել է Բելգրադ, ապա մի քանի տարի անց՝ ԱՄՆ:

1960 թւականին՝ 64 տարեկանում, Սողոմոն Թեհլիրեանը մահացել է Սան Ֆրանցիսկօ քաղաքում, թաղուել է Ֆրեզնոյի հայկական «Արարատ» գերեզմանատանը:

Arfd.am

Յիշատակի միջոցառում՝ նուիրուած «Նեմեսիս» գործողութեան 103-ամեակին

«Նեմեսիս» գործողութեան 103-ամեակի առթիւ, ՀՅԴ ՀԵՄ-ի եւ ՀՅԴ Աջափնեակի կոմիտէի նախաձեռնութեամբ, Աջափնեակ համայնքում գտնուող Սողոմոն Թեհլիրեանի կիսանդրու հարեւանութեամբ յիշատակի միջոցառում է նախաձեռնուել:

Միջոցառմանը ներկայ ՀՅԴ Հայաստանի ԳՄ անդամ, ազատամարտիկ Իգոր Սարգսեանը, կարեւորելով օրւայ խորհուրդը, ասել է.

«103 տարի առաջ Բեռլինում մի թուրք զարկեցին, ո՞վ էր այդ թուրքը. նրան թուրքական կառավարութիւնն անգամ, եւս մի շարք ղեկավարների, դատապարտեցին գնդակահարութեան՝ հայերին ցեղասպանելու համար, բայց բաց թողեցին, որ՝ ինչքան կապրեն-կապրեն, կամ՝ ով կը խփի, թող խփի: Որոշում կայացուեց, որ մեր ազգի ոճրագործներին պէտք է ոչնչացնել... Գործողութիւնը կոչուեց «Նեմեսիս» եւ դրա շրջանակներում զոհուեցին բազմաթիւ թուրքեր, բայց բազմահազար կատարողներ չպատժուեցին, եւ այդ անպատիժ մնալը ծնեց նոր ցեղասպանութիւն: Թուրքը երբեք չճանաչեց ցեղասպանութիւնը, երբեք չուզեց ներողութիւն խնդրել եւ այսօր նորից ոճրագործութիւններ է իրականացնում»,-ասել է Իգոր Սարգսեանը:

«Հայոց Դատն անմոռ է. մե՛նք պէտք է վճռենք մեր դատը՝ ուժեղանալով ու վստահելով միմեանց... Այդ դատը մենք պէտք է իրականացնենք. այսօր էլ պահանջում են՝ եւս 4 գիւղ տուէք, որ ձեր ձագին չուտենք. կազմակերպուենք, ոտքի կանգնենք»,-ասել է ՀՅԴ ԳՄ անդամը:

Arfd.am

Երկու տարբեր թռիչքներ դէպի՝ Հայաստան

Թեհրան - Երեւան - Թեհրան

IRAN AIRTOUR AIRLINES — Qeshm Air

برای تهیه بلیط می توانید با

شرکت حمل و نقل بین المللی و مسافرتی ستی

۰۲۱-۸۸۵۴۱۲۴۲-۵ و ۸۸۵۴۱۲۹۸-۹ agency@sati-co.com

و در شهر اصفهان با آژانس آرمان گشت «ناربه ژاردن» ۰۹۱۳۳۰۰۸۰۲۹

و شباهنگ سیر «رافیک خداوردیان» ۰۹۱۳۳۰۵۳۸۳۵ تماس حاصل نمایید.

«ԲԱԶԷ» ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

آژانس مسافرتی «بازه»

BAZE TOUR & TRAVEL AGENCY

Հասցէ՝ Կոմիտաս 20, բն. 22, Երեւան, Հայաստան

Հեռախօս՝ +374 965 75 305 եւ + 374 102 22 824

نشانی: خیابان کومیتاس، شماره ۲۲، ایروان – ارمنستان تلفن: ۸۲۴ ۲۲ ۱۰۲ ۳۷۴+ , ۳۰۵ ۷۵ ۹۶۵ ۳۷۴+

Address: Komitas St., Bld.20, Apt. 22 E-mail: info@bazetravel.am

SET Coffee

فروشگاه: هفتم تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰

کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار هاگنولیا، پلاک A117

0936-6726563

021-88305827

www.set-coffee.com

قهوه ست

«Արարատ»

Ամէն տեսակ տնային իրերի գնորդ

سماور ذغالی، نقره جات، ظروف مسی،

چراغ لاله و لوستر،

رادیو لامپی ، رادیوگرام مبله، صفحه گرام ،

لوازم چوبی آنتیک و خرده

Հեռ.՝ 88523388

ՔԱՐԻՄԻ

Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ

خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی،

مبلمان، خرده ریز و لوازم آنتیک

Հեռ.՝ 88594063 եւ 09 12 11932 12

املاک هنرمندان

● بزرگترین آژانس مسکن

مرکز شهر تهران (منطقه ۶)

● خانه های قدیمی تخصص ماست

آدرس: میدان هفت تیر، کریمخان،

خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک ۴

تلفن: ۸۸۸۴۵۵۶۶ –۸۸۸۴۵۵۷۷

واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰

مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴

مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی

Բաքուն հիմա էլ փորձում է Նոռուզը սեփականացնել

Ալիեւական մամուլի վերջին յայտնագործութիւնը. «Նոռուզը պէտք է անուանել իր պատմական անունով՝ «Ենգի Գոն»»

«ԱԼԻՔ» - Պատմութիւնը կեղծելու պանթուրքիստական յատկութիւնը եւ բնագդի պէս արտայայտուած բնաւորութեան այդ գիծն այս անգամ եւս Բաքուին ծիծաղելի վիճակում է թողել: Իրենց շումերական քաղաքակրթութեան կրողն ու արեան ժառանգ համարելու փորձերի կողքին այժմ Ալիեւների ընտանիքին պատկանող «Ախար»-ի լրահոսում է յայտնուել Թոհիդ Մալէքզադէի գրչին պատկանող «Ենգի գոնեա Նոռուզ» խորագրով յօդուածը: Թուրքերի տօնը- գրում է «Ախար»-ը - այսօր բազմաթիւ տօներ են տօնւում տարածաշրջանի եւ Ասիայի թուրքերի ու այլ էթնիկ խմբերի շրջանում: «Իսկ փաստերը խօսում են այն մասին, որ Նոռուզի օրերի հիմնական տօնն ու գաղափարը, ոչ-աւել, ոչ-պակաս ունի թուրքական նախապատմութիւն»:

Նոյն կապակցութեամբ պատասխան գրառում է հրապարակել դոկտ. Էհսան Մովսեհեդեանն իր սոցիալական ցանցերի բոլոր ալիքներում, որտեղ նա աւելորդ համարելով շումերականի եւ թուրքական էութիւնների նոյնականացման փորձերի մասին խօսելը, նշել է, որ յօդուածագիրը զարմացած է յատկապէս այն բանից, որ հէնց իր ասութեամբ՝ այսօր, որոշ էթնիկ խմբեր թուրքերի բայրամը համարում են իրենց նորտարւայ ընդօրինակում հէնց այդ անուանումի՝ Նոռուզի պատճառով: Ապա յաւելում. «Յաւօք, նախապաշարմունքների բացակայութեան պատճառով մեր ազգային տօնը կոչել է ոչ թուրքական»:

«Ախար»-ի յօդուածագիրը մոռանալով երկու տող վերում նշած մոգոնումները անցել է իր երկրորդ վարկածին՝ Նոռուզը անուանելով «Ենգի Գոն» այն կապ տալով չգիտես որտեղից բերած պատմական թագաւորութեան հետ: «Ադրբեջանական նոր տարին կապած է առասպելական թագաւորութեան անուան հետ, որի համաձայն, երբ թագաւորը ժամանում է Ադրբեջան, նա բազմում է գահի արեւելեան կողմում, իսկ հէնց՝ ծագած արեւի լոյսի առաջին շողն ընկնում է թագի ծայրին, մարդիկ պահն ու օրը անուանում են «Ենգի Գոն» կամ ձեր իմացած Նոռուզը»:

Մովսեհեդեանը յաւելել է, որ յօդուածագիրը կարծես արբեցած իր առասպելաբանութիւնից բոլորովին անկապ ու անտրամաբանական կամուրջներ է փնտրում թուրքերի եւ ազտեկների ու ինկայական քաղաքակրթութեան միջեւ: Սակայն ընդհանուր իւսքը մնում է նոյնը՝ «ժամանակակից թուրքերէնը եւ հին շումերական լեզուն նոյն արմատից են»:

Եւ այսպիսով յօդուածագիրը միանգամից անցնում է առաջ եւ հին թուրքերի լեգենդներ կոչելով շումերական պատմութիւնները գրչի մէկ հարուածով նոյնականացնում է Նոռուզն ու «Արքէ Նեհ Քուն»-ը: Վերջնիս համաձայն դա նոյն օրն է, երբ թուրքերը կարողացել են ճեղքել երկաթէ պարիսպը՝ հրկիզելով երկաթէ լեռը եւ մտնել իրենց նոր դարաշրջան:

Կովկասի հարցերով աւագ փորձագէտ Էհսան Մովսեհեդեանը բազմիցս է անդրադարձել Բաքւի կողմից տարածաշրջանում հայկական եւ իրանական պատմամշակութային եւ հոգեւոր արժէքների իւրացման փաստերին: Նոյնն է կատարւում նաեւ Արցախում, երբ խօսք է գնում հայկական պատմամշակութային կոթողների, կամ էթնիկ խմբերի ծագումնաբանութիւնների շուրջ:

Փորձագէտը յաւելել է, որ թուրքիզմի երեւակայական գաղափարներն ու մտաւոր հիւսւածքները պատմական հարցերի գծով իրական գոյն ու երանգ են ստանում համապատասխան անգրագէտ ու ամբոխային տրամաբանութիւն արթնացնող գրառումներով միայն: «Այդ մասշտաբի անկապութիւնների ու ֆէյք պատմութիւնների միջեւ անտրամաբանական կապեր հաստատելու արդիւնք են դրանք: Թուրքիզմի գրքերն ու «ստեղծագործութիւնները» կազմելն ու հրատարակումը դժւար գործ չէ»,- գրում է փորձագէտը եւ պարզաբանում, որ այն չունի ԲՈՒՀ մտնելու նպատակ, փոխարէնը եկել է թիրախաւորելու ոչ-գրագէտ խաւը: «Փաստաթղթերի ու տեղեկանքների կարիք չունի այն: Նրանց պէտք է սերունդ, ով եթէ մտածել է սկսում, ապա միայն նման կերպ: Այդ իսկ պատճառով թուրքիզմը քարոզելու համար գրաւոր եւ հեռուստատեսային բովանդակութեան արտադրութիւնը շարունակում է թունաւորել երիտասարդ սերնդի մտքերը»,-եզրակացրել է նա:

Թեհրանի....

(Շար. 1-ին էջից)

Թուրքիայում տեղի ունեցած Հայոց Ցեղասպանութեան զոհերի յիշատակին, ինչպէս նաեւ Ցեղասպանութիւնը վերապրած բոլոր էթնիկ խմբերին:

Յատկանշական է, որ հանդիսատեսի պնդմամբ համերգը շարունակւել է հիմնական ծրագրի աւարտից առնւազն կէս ժամ անց:

Ընթերցողը Սերժիկ Միրզայեանի «ԱԼԻՔ»-ին տուած հարցազրոյցներից արդէն տեղեակ է, որ անւանի դիրիժորն իր երաժշտական ճանապարհն սկսել է 17 տարեկանում, երբ անդամակցել է «Ուրարտու» երգչախմբին՝ Ժոռա Մինասեանի ղեկավարութեամբ: Նա նաեւ որպէս խմբի դաշնակահար ղեկավարել է իր խմբերգային ստեղծագործութիւններից մի քանիսը: Նոյն տարիներին նա մասնակցել է Հոսէյն Սարշարի հնչիւնաւորման դասերին: Ապա անդամակցում է Գուրգէն Մովսիսեանի ղեկավարած «Կարապ», ապա Տիգրան Սուքիասեանի «Նարեկ» երգչախմբերին: Նա շուրջ մէկ տարի մասնակցել է Հրաչուհի Մակարեանի ղեկավարած «Ներսէս Շնորհալի» երգչախմբի ձայնավարժումներին ու կատարումներին, որտեղից մուտք է գործում Գուրգէն Մովսիսեանի ղեկավարութեամբ՝ Մշակոյթի եւ իսլամական առաջնորդութեան նախարարութեան պաշտօնական երգչախումբ, որտեղ շուրջ 7 տարի խմբի հետ հանդէս է եկել որպէս՝ «տենոր» երգիչ:

Նա հանդէս է եկել նաեւ Գուրգէն Մովսիսեանի, Ֆերէյդուն Նասերիի, Ֆարհադ Ֆախրեդդինիի, Լորիս Ճգնաւորեանի, Շահրդադ Ռոհանիի, Մանուչեհր Սոհբայի, Մաջիդ Էնթեզամիի եւ Էդօ Միչիչի (Աւստրիացի կոմպոզիտոր-Գրաց քաղաքի սիմֆոնիկ նւագախմբի ղեկավար) ղեկավարութեամբ համերգներին:

Առողջապահութեան....

(Շար. 1-ին էջից)

առողջապահութեան, բուժման եւ բժշկական կրթութեան նախարար Բահրամ Էյնօլլահիի ելոյթից յետոյ, Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութիւնում Եւրոպայի տարածաշրջանային ներկայացուցիչը Իրանի անունը գրանցել է «Ընտանեկան առողջութիւն» նորարարական նախագծում:

Parstoday-ի համաձայն՝ Շանհայի գագաթնաժողովի անդամ երկրների առողջապահութեան նախարարների 7-րդ հանդիպմանը անդրադառնալով ընտանիքի առողջութեան ոլորտում Իրանի ձեռքբերումներին, Իրանի առողջապահութեան, բուժման եւ բժշկական կրթութեան նախարարն, ասել է. «Ընտանեկան առողջութիւն» նախագիծը համարւում է իրանական հասարակութեան առողջութեան հիմնական առանցքը:

Նշելով, որ Իրանի Իսլամական Հանրապետութիւնը բազմաթիւ ձեռքբերումներ ունի առողջապահութեան ոլորտում, Բահրամ Էյնօլլահին յաւելել է. «Շանհայի համագործակցութեան կազմակերպութեան անդամ երկրները ցանկանում են Իրանի հետ ակադեմիական համագործակցութիւն, ինչպէս նաեւ համատեղ արտադրութիւն եւ հետազօտութիւններ դեղորայքի եւ բժշկական սարքաւորումների ոլորտներում»:

Առողջապահութեան եւ բուժման ոլորտներում Իրանի Իսլամական Հանրապետութեան առաջընթացը վերջին տարիներին պատճառ է դարձել, որ Իրանը որպէս տարածաշրջանի բժշկական կենտրոններից մէկը երկրների ուշադրութեան կենտրոնում յայտնւի:

Ոսկրածուծի փոխպատւաստման եւ անպտղութեան բուժման ոլորտներում երեք առաջատար երկրների շարքում յայտնւելը, օրթոպեդիայի եւ օրգանների փոխպատւաստման ոլորտում աշխարհում չորրորդ տեղն զբաղեցնելը բժշկութեան ոլորտում Իրանի արձանագրած նւաճումներն են:

Նաեւ որոշ հիւանդութիւնների համար անհրաժեշտ դեղամիջոցների արտադրութեամբ Իրանն աշխարհում 7-րդն է եւ կոխլեար իմպլանտացիայով աշխարհի առաջատար հնգեակում է: